

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մինհստրական փոփրիսութիւն Խոսդայում.—Ու նղարական պարամենքի խափանումը.—Դ Անտոն Մեծեցը և Ելզինէ Թիվեր.—Մինհստրական փոփրիսութիւն Ֆրանչիստում.—Անգլիան, Ֆրանչիստ և Խոսդայում արևատականանում են:

Խառալիան այն երկրներից մէկն է, ուր սահմանադրութիւնը յաճախ մինհստրների ձեռքում դառնում է ձևականութիւն։ «Ժամանակականների», «Հրշամանների» միջոցով մեծ աներեսութեամբ պարոն մինհստրները կարողանում էին նոյնիսկ դադարեցնել պարլամենտի գործունչութիւնը, ինչպէս այդ արաւ, օրինակ, 1894 թուականին Կրիսպին։ Կառավարութիւնը միշտ հնարաւորութիւն ունէր «գաղտնի ֆոնդի» միջոցով կաշառել մամուլը, արտակարգ լիազօրութիւնների միջոցով սաստկացնել ցենդուրան, հալածել ծայրայել կուսակցութիւնները։ Աղքատ և տգէտ ժողովրդի կեանքի բարուոքման վրայ համարեա ուշադրութիւն չէր դարձնում. խոշոր կալուածատէրների և բանկային գեշեֆտմախիսների հետ սերտ կապուած մինհստրները յաճախ բռնում էին սկանդալիօգ գերփումների մէջ։ Չնայած այդ ներքին ողորմելի իրականութեան Խտալիան ձգտում էր արտաքին շլացուցիչ գերխաղալ միջազգային կեանքում և յետ չմնալ մեծ պետութիւններից։ Կարծեմ միայն Մհենելիքի տուած ջարդից (1895 թ.) յետոյ մի քիչ խելքը գլուխն հաւաքեց տանia grandiosa ախտող բռնուած այդ բադաքականութիւնը։

Աղքատ և տգէտ է մանաւանդ հարաւային Խտալիան՝ Սիցիլիա կղզով, ուր խոշոր կալուածատէրութեան կողքին թւշուառ կեանք է քաշում հողագուրեկ կամ թզուկաչափ հողաբաժին ունեցող գիւղացիութիւնը։ Ժողովրդի տգիտութեան և աղքատութեան միացրէք մի խայտառակ աղմինհստրացիա և դուք կը ստանաք բացատրութիւն թէ ինչու այնքան յաճախ են կրկնում այդ երկրում ժողովրդական խառնակութիւններ, ինչու այնքան դիմացկան են կամորրայի և մաֆիայի նման սրիկայական գաղտնի կազմակերպութիւններ, որոնց տրուած տերրորից ազատուելու համար իւրաքանչիւր խտալացի փրկուու

Էր որոշ տուրք վճարելով: Սակայն այդ «ազնիւ տղերանցից» (ցիօնագումարութիւնների անդամնութեալ այդ սրիկայական կազմակերպութիւնների անդամնութեալ, աւելի լաւ չէին այն մինիստրները, որոնց յանձնուած էր երկրի բարօրութիւնը: Դրանք գեղեցիկ ճառերով էին քողարկում իրանց կատարեալ ապիկարութիւնը, մինչև որ արմատական կուսակցութիւնների գործունէութիւնը ժողովրդի մէջ բաւականաշափ հող չգտաւ իր ուսների տակ և իտալիայի նշանաւոր գիտնականներից մէկը էնրիկօ Ֆերրին գլուխ չանցաւ նոր քաղաքական կուսակցութեան: 1906 թուականին ընտրութիւնների ժամանակ իտալական պարլամենտի մէջ ընտրուեցան 32 սոցիալիստներ և զգալի դառաւ տարեցտարի պարլամենտի մթնոլորտի ընդհանուր բարուռքումը: Այժմ երբ ընկաւ ֆորտիսի մինիստրութիւնը աւելի ևս բացարձակ է երեսում իտալական պարլամենտի շեղումը դէպի ձախ: Սոննինօի նոր մինիստրութիւնը կազմուած է իտալական նշանաւոր տնտեսագէտներից: ինքը նախազահ-մինիստր Սոննինօն, գանձարանի մինիստր Լուցցատին, առևետրի, արդիւնագործութեան և երկրագործութեան մինիստր Պոնտանին, Փինանսների մինիստր Սալանդրան, լուսաւորութեան մինիստր Բողելլին, երկաթուղիների մինիստր Կորմինէն—բոլորն էլ յայտնի են իրեւն նշանաւոր էկոնոմիստներ և անպայման մաքուր մարդիկ արմատական աշխարհայեցողութեամբ:

Սոննինօն հէնց իր առաջին կարգագրութիւններով ցոյց տուեց որ նոր ընթացք է սկսւում իտալական ներքին քաղաքականութեան մէջ: Նա ոչնչացրեց գաղտնի ֆոնդը, որ նրա նախարարները գործադրում էին մամուլը կաշառելու համար: Նա վերացրեց լրագրական հեռագրական ցենզուրան, իր ծրագրի մէջ առաջնակարգ տեղը դրեց հողային հարցը, ժողովրդի լուսաւորութեան գործը, զաղթային հարցը և բանուորների պաշտօնագրութիւնը, որոնք պէտք է լուծուեն ինպաստ մասսայի: Եւ հաստրակական կեանքի երևոյթներն խիստ քննադատող մամուլըն անգամ հաստատում է որ նոր մինիստրութիւնը գործ պէտք է տեսնէ և ոչ խօսքերով ընացնի հասարակութիւնը: Իտալական սոցիալիստների պարագլուխ էնրիկօ Ֆերրին իր Անառոն թերթում մեծ համակրանքով է ողջունում Սոննինօի մինիստրութիւնը, յոյս տածելով որ նրանից սկսւում է իտալիայի վերածնութիւնը: Զի կարելի բոլոր սրտից չցանկալ որ այդ տաղանդաւոր և համակրելի ժողովուրդը վերջապէս ազատուի այն թշուառութիւնից, որի մէջ նա պահուում է մօտ կէս դար հիտալիայի միութեան» տանջալից երկունքի անցնելուց յետոյ անդամ:

Բուն ժողովրդական մասսաների բարօրութեան հարցը մուացութեան է տրուած և մի այլ երկրում, որ կլասիկ կարող է համարուել իր բուռն նացիօնալիստականութեամբ։ Մեր խօսքը անշուշտ Ունգարիայի մասին է։ Նրա ազնուականութիւնը և բուրդուազիան ամենաթունդ նացիօնալիզմով բռնուած՝ ահա երեք տարի է կուի են մղում աւստրիական կառավարութեան դէմ, պահանջելով որ ունգարական զօրքի հրամանատարութիւնը կատարուի ունգար լեզուով։ Ունգարական մազնատների սրտին այդ հարցը աւելի մօտ է, քան ընտրողական իրաւունքը, որ պահանջում է ունգար ժողովուրդը։ Ունգար մազնատները մի կողմից հակառակում են այդ արդար պահանջին, որ պէտք է չէղորացնէր իրանց իշխանութիւնը, միւս կողմից իրանց հացիօնալիստական պահանջի մէջ այնքան հեռու են գընում որ լացարձակ ընդդիմադրութիւն են ցոյց տալիս նոյն խակ սահմանադրութեամբ կայսրին վերապահած արտօնութիւնները զօրքի նկատմամբ։ Ունգար ընդդիմադիր կուսակցութիւնների միութիւնը պահանջում է վերաքնննել սահմանադրութեան այն կէտերը, որոնց հիման վրայ կայսրը մերժում է գործադրութան ապահովութիւնը պահանջներին զօրքի ազգայնացման վերաբերմար։ Այդ նոյն ունգար ազգասէրները ոչինչ չեն ուզում լսել սահմանադրական այնպիսի փոփոխութիւնների մասին, որոնց հետևանքը պէտք է լինի ընդհանուր ձայնուութիւնը թագի և ընդդիմադիր միութիւն լարուած դրութիւնը վերջի վերջոյ այնքան սուր կերպարանք ստացաւ որ կայսրը բռնի ուժով փետրուարի 6-ին արձակեց ունգարական պարլամենտը. մի քայլ որ ընդունակ է ժողովրդական մասսաների համակրանքը. ուղղելու մինչ այդ ատելի առանձնաշնորհեաների—մազնատների կողմը։

Ընդհանուր ընտրողական իրաւունքի այն բեֆորմը, որ մշակել է Գառուչը և այժմ քննւում է Վիէննայի բայխսրատում, ահագին նշանակութիւն ունի իրեւ առաջին փորձ լուծելու միասին ապրող ազգութիւնների կեանքում ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունքի իրագործումը։ Այժմուանից արդէն նկատելի է որ վերմանացիները գերիշխող փոքրամասնութիւն կազմելով չեն ուզում այդ արդար սկզբունքի չնորհիւ կորցնել իրանց արտօնեալ դրութիւնը սլաւօնների նկատմամբ, որոնք թուով կրկնակի են Աւստրիայում (18 միլ.)։ Գոհ չեն երեւում և լեները, որոնք Գալիցիայում ճնշում էին ըռուսին ազգաբնակութիւնը։ Խնքըստինքեան հասկանալի է որ այդ բեֆորմի կողմանից են լինելու ժողովրդական մասսաների շահերն պաշտպանող կուսակցութիւնները, որոնց մէջ առ-

հասարակ թոյլ է լինում զարգացած նացիօնալիստական անտագոնիզմը, երբ մանաւանդ այդ մասսաների մէջ սերմանած են լինում սոցիալիստական գաղափարներ: Իսկ այդ գաղափարներն անդիմադրելի թափով տարածում են, ինչպէս մի ժամանակ քրիստոնէութիւնը: Շատ բնորոշ է այդ կողմից աշխարհայացքի այն անկախ էվլիցիան, որ կատարուեց հըռչակաւոր աւստրիական իրաւաբան Անտոն Մենգերի մէջ: Վիէննայի համարարանի այդ նշանաւոր գիտնականը, որ վախճանուեց այս յունուարի 25-ին, իրաւական նորմաների տարրալուծութեամբ կամաց-կամաց լիբերալիզմից հասաւ սոցիալիզմին: Նրա «Պետութեան մասին նոր ուսմունք» գրուածքը գալիս է ցոյց տալու որ իրաւական-բարոյական հարցերի տարրալուծումն ևս մարդկային ապագան սոցիալիզմի մէջ է գտնում: Ահա մի գիտնական որ ղեկավարուելով անկախ, ազնիւ և լայն մտածողութեամբ, առանց պատկանելու այս կամ այն նեղ կուսակցութեան, այլ սոցիալական արդարութեան մեծ հարցի լուծման նոր ճանապարհներ որոնելով, զալիս է կանգնում այն ուղղութեան վրայ, որին հասել են էկոնոմիստները տնտեսական կատեգորիայի երևոյթների անալիզով: Արժէ որ մեր ընթերցողները կարդան Անտոն Մենգերի յիշած գրուածքը, որի թարգմանութեանը ուսւերէն (Խօս սույն ուսուցչութեան համար է ձեռք բերել:

Լայն մտքով՝ հասկացած լիբերալիզմին հաւատարիմ մնաց մինչև կեանքի վերջը փետրուարի 25-ին վախճանած հռչակաւոր գերմանացի Նուզենի Միլիստերը: Ով հետաքրքրուել է գերմանական բայխստագի կեանքով նրան պէտք է լաւ ծանօթ լինի այդ պերճախօս և սրամիս հոեստորի և գերման ազատամիտների պարագլուխ, Բիսմարկի պարլամենտական նշանաւոր ախոյանի անունը:

Քաղաքական ազատութեան, քաղաքացիական հաւասարութեան այդ քաջանարտիկ կոռուողը պարլամենտարիզմի անխորդակելի նեցուկ էր Գերմանիայում, սակայն անսուհման ազատութիւնը տարածելով նաև տնտեսական յարաբերութիւնների վրայ, նա հասարակական անարդարութիւնը վերացնելու սոցիալիստական միջոցները վասակար ուսուպիս էր համարում և պակաս չէր մաքառում ույսաստագում Բերենբիների, Ֆոլմարների և Զինգերների դէմ: Լիբերալիզմի այդ խրոխտ ժայռը չասկացաւ իր շուրջը ծփող կեանքի նոր հռասնքները, տնտեսական ստրուկտուրայի փոփոխութեան շնորհիւ առաջացած ժողովրդական նոր խաւերի ոյժը, ուստի նրա կուսակցութիւնը օրէցօր նուազեց և գուցէ պարագլիսի մահով

դադարի գոյութիւն ունենալու։ Բայց իհարկէ երբէք չեմուացուի այն ահագին ծառայութիւնը որ կատարեց 30 տարիների ընթացքում գերմանական պարլամենտարիզմի այդ տաղանդաւոր և անվեհեր մարտնչողը, որի իւրաքանչիւր խօսքը ոուր նետի պէս ցցւում էր Բիսմարկի և Վիլհելմի 11-րդի սրառումը, երբ դրանք փորձում էին զանազան կապանքներ դնել ժողովրդական ազատ ներկայացուցչութեան վրայ կամ ռազմասիրական ֆանտազիաների վրայ մսխել ժողովրդի կապէիները։ Եթէ վերջին տարին նա հիւանդ չլինէր՝ երեխ Մարոկկոյի հարցում Վիլհելմի բռնած դիրքը Ֆրանսիայի նկատմամբ կծու քննադատութիւնների ենթարկուէր Միխտերի կողմից, որովհետև այդ դիրքը սպառնում է ֆրանսկորմանական պատերազմի ուրուականով։ Մարոկկօի հարցը այսօր մեծ մտատանջութիւն է պատճառում ֆրանսիական ժողովուրդին։ Եւ Ռումիէի մինիստրութեան անկման գլխաւոր պատճառը համարում է հէնց այդ հարցը. պարլամենտը պահանջում էր որ Ռումիէն աւելի մօտ ծանօթացնի իր մտադրութիւնների հետ մարոկկան հարցում, իսկ մինիստրը, «ազգային շահերով» արդարանալով, խուսափող պատասխաններ էր տալիս։ Թու չէին և նրա դանդաղ քաղաքականութիւնից եկեղեցական գոյքերի ցուցակագրութեան ժամանակ, 89 հազար եկեղեցիներից միայն 25 հազարի գոյքն է դեռ ցուցակագրուած։ Մայրայեղ ձախակողմեանները երես դարձրին Ռումիէից և նա ընկաւ։ Ֆալիերը նոր մինիստրութեան կազմակերպելը յանձնեց Մարիէնին. կազմուեց աւելի արմատական մինիստրութիւն, որի մէջ արտաքին գործերի պորտֆելը ստանձնեց Լէօն Բուրժուան, իսկ ներքին՝ Ժ. Կլեմանսօ։ Այդպիսով Ֆրանսիայում կառավարութիւնը աւելի ևս արմատական-ձախակողմեան դառաւ, ինչպէս և Ռումիայում ու Անգլիայում։

Հ. Ս.

Մարտի 1-ին։

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՔՐՈՆԻԿԻ

—Զմիրնի Գարաթաշթաղի բնակիչներէն էվէրէկցի Տիկին Մարիամ Գ. Մինանիան նոյն թաղի մէջ իր ունեցած չորս տուները նուիրեր է Ս. Կարապետ եկեղեցին, պայմանով որ իրեն և իր ամուսին մահէն յետոյ, այդ տուների վարձքերէն գոյացած